ՆՈՐ-ԴԱՐ

№ 202 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ **Հինգշաբթի 1 Դեկտեմբերի** **1888** **Հինգշաբթի 1 Դեկտեմբերի** ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 202

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատ մ՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմայն խմբագրատանը։

Խմբագրութիւան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնաւճարը 2 կ., բոլշեվիկների համար կրկնապատիկ։

ԿԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
Թիֆլիսում
ԱՌԱՋԻԿԱՑ **1889** ԹՈՒԱԿԱՆԻՆ
(*Վեցերորդ տարի*)
Կը հրատարակւի նոյն ղեկով և ծրագրով
Խմբագրութիւնը կ'ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում հետևեալ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր թղթակիցներին։
Քրոնիկոն. — Լուրեր։ Ծովինար (շար.)։ Նամակ Գերմանիայից (վերջ)։
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։
Թատրոն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագրերը։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Բանասիրական.—Առաջին սէր (շարունկ.)։
Յայտարարութիւնները։

Թիֆլիս, 30 նոյեմբերի 1888.

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՆ

Ի՞նչ է պահանջում այսօր ընթերցողը ամենօրեայ թերթից—այդ հարցը միշտ աչքի առաջ պէտք է ունենայ «Նոր-Դար»-ին թղթակցողը։

Այսօր ընթերցողը բացի առաջնորդողներից, բանասիրական, վիպական գրուածքներից, նոյնպէս և իւր գիտութեան պաշարը հարստացնող և ճաշակը զարգացնող յօդուածներից, պահանջում է և աշխարհիս քաղաքական կեանքից ընթացիկ տեղեկութիւնները և—մեր ու մեզ շրջապատող առօրեայ կեանքի, հասարակական, ընկերական, ժողովրդի կեանքի մէջ լայտնուղող դէպքերի, երևոյթների, կատարուղ և կատարուած նշանաւոր կամ կարևոր գործերի վերաբերութեամբ լուրեր։

Մեր ժողովրդի կեանքի և ընդհանրապէս մեր երկրի վերաբերեալ մեզ լուրեր հաղորդողը Թիֆլիսում՝ լրագրական լրատուներն են, իսկ գաւառներից և հեռաւոր քաղաքներից—մեր թղթակիցները։

Հետևաբար «Նոր-Դար»-ին թղթակցողներն ի նկատի պիտի ունենան այդ կողմից ընթերցողի պահանջը։

Ի՞նչ է պահանջում մեր ժամանակի ընթերցողը թղթակցից, լրատու թղթակցից. նա պահանջում է, որ թղթակիցը հաղորդէ լրագրին կեանքի ամեն տեսակ հետաքրքիր երևոյթների, դէպքերի և կատարուելիք կամ կատարուած գործերի վերաբերութեամբ տեղեկութիւններ։ Բայց այդ տեղեկութիւնները նա պահանջում է հետևեալ պայմաններով. նախ՝ որ տեղեկութիւնները հետաքրքիր լինին, լուրերը կարևոր և կարելոյն չափ ճիշդ լինին. երկրորդ՝ թարմ լինին և երրորդ՝ կարճ և պարզ գրուած լինին. քիչ բառերով ուելի շատ բան հաղորդուած լինի։

Եթէ մեր թղթակիցները լրջութեամբ վերաբերուին ընթերցողի պահանջին, նրանք կարող են այսուհետև աւելի օգտաւէտ լինել, և խմբագրութեանս գործը թեթևացնելուն մեծապէս նպաստել։

Նախ թղթակիցները թերթին հետևելով պէտք է իրենք գտնեն, թէ ո՛ր դէպքն ունի հասարակական նշանակութիւն, հետևաբար արժէ լուր հաղորդել այդ դէպքի մասին լրագրին, և ո՛ր դէպքը իբրև մասնաւոր և աննշան երևոյթ չարժէ լրագրին հաղորդել։ Մի թէ մեր ամենօրեայ կեանքում ուրիշ էլ ոչինչ երևոյթ չկայ, ոչինչ չէ կատարւում բացի մղդուսւ, երեցփոխի հաշիւներից, քահանայի կամ դպրոցական վէճերից։

Ի՞նչ մի թղթակցութեան նիւթ է, օրինակ, թէ այս ինչ դպրոցում այս ինչ ուսուցչի հետ կռուեցան կամ այն ինչ դպրոցի հոգաբարձուն գնապանի հետ կոպիտ է վարւում և ռռճիկն էլ չէ տալիս։ Մի թէ ուրիշները դպրոցներ չունեն, ուրիշները մղդսիներ չունեն. վեր առէք տեղական ռուս թերթերը. արդեօք կը գտնէք այդ կողմից նրանց մէջ երբ և իցէ նրա հազարերորդ մասը, ինչ որ մեր մամուլին ամեն օր մատակարարում են։

Եթէ ամբողջ Բագուն իւր նաւթահորերով մի առաւօտ տեղափոխուէր Լէնքօրան, այդ դէպքի մասին տեղեկութիւնը մենք կը ստանայինք Պետերբուրգից, այլ դէպքը չէր կարող հետաքրքրել հայոց մամուլին թղթակցողներին. նրանք կը գրէին մեզ աւելի նշանաւոր լուր, օրինակ այս ինչ քահանան իւր ստացած եկամուտից գոհ չէ։

Ի՛նչ մի հետաքրքիր լուրեր են, օրինակ, այն սովորական և միատեսակ լուրերը, որ սկսւում են այսպէս. «... մեզ մօտ էլ կատարուեցաւ (այս ինչ) ոսկը, ժողովուրդ շատ կար եկեղեցում, պատարագին (այս ինչ) քահանան մի ազդու քարոզ խօսեց և այլն»։ Ի հարկէ, երբ ամեն տեղից գանգատւում են, որ չունին քարոզիչներ, պէտք է, որ ոսկի ժամանակ ամեն տեղ քահանան «ազդու քարոզ» տուած լինի։

Ուրեմն թղթակիցը ամենից առաջ պէտք է սովորի որոշել հասարակական նշանակութիւն ունեցող դէպքը, երևոյթը, գործը մասնաւոր և աննշան դէպքից, երևոյթից, գործից։

Երկրորդ՝ նա առօրեայ կեանքի ամեն տեսակ երևոյթների վրայ պէտք է ուշադրութիւն դարձնէ և սովորէ դրանց մէջից ընտրել լրագրի համար հարկաւորը և հետաքրքիրը և երրորդ՝ պէտք է աշխատէ իւր թղթակցութիւնները կամ տեղեկութիւնները կարելոյն չափ կարճ և քիչ բառերով գրել և, որ կարևորագոյն է ամենօրեայ թերթի համար, դէպքը, երևոյթը չթողնէ, որ հնանայ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ *)

(Տուրգենևից)

VIII

Միւս օրը առաւօտեան, երբ ես ցած գնացի թէյ խմելու, մայրս չանդիմանեց ինձ—սակայն սպասածիցս աւելի քիչ—և ստիպեց ինձ պատմելու, թէ ինչպէս էի անցկացրել նախընթաց օրուայ երեկոն։ Ես նրան մի քանի խօսքով միայն պատմեցի, Թողնելով շատ մանրամասնութիւնները, աշխատեցի ամեն բան ամենաանմեղ գոյնով ներկայացնել։

—Բայց և այնպէս նրանք comme il faut (ինչպէս հարկն է) մարդիկ չեն,—նկատեց մայրիկս, — փոխանակ նրա մօտ թրև գալու, աւելի լաւ է քննութեան պատրաստուիս, սլաւսլիս։

Բայց որովհետև գիտէի, որ իմ պատասխանելու մասին մօրս հոգածութիւնները միայն այդ մի քանի խօսքերով վերջանում էին, ուստի ես չհակաճառեցայ նրան. բայց թէյից յետոյ, հայրս ինձ թևանցուկ առաւ և հեռու տարաւ պարտէզ և այնտեղ սկսեց ինձ պատմելու ամենը, ինչ որ տեսել էի Զասեկինների տանը։

Զարմանալի ազդեցութիւն ունէր հայրս ինձ վրայ—և զարմանալի էին մեր յարաբերութիւնները։ Նա հասարեա թէ չէր զբաղւում իմ դաստիարակութեամբս, բայց երբէք էլ չէր վերաւորում ինձ. նա յարգում էր իմ ազատութիւնս, — նա մինչև անգամ, եթէ կարելի է այսպէս ասել, քաղաքավարի էր ինձ հետ... միայն նա ինձ չէր թոյլ տալիս իրեն մտերմանալու։ Ես սիրում էի նրան, ես հըրճւում էի նրանով, տզմարդի տիպար էր թւում նա ինձ—և, Աստուած իմ, ինչ չերմութեամբ կը կապուէի նրան, եթէ անդադար չզգայի նրա ինձ հեռու մղող ձեռքը։ Բայց դրա փոխարէն էլ, երբ կանեինաք, նա կարողանում էր համարեա մի ակնթարթում, մի խօսքով, մի չարժումով անհուն վստահութիւն ներշնչել ինձ դէպի իրեն։ Սիրտս բացւում էր—ես խօսակցում էի ինչպէս մի խելացի բարեկամի, ինչպէս ներողամիտ դաստիարակչի հետ... յետոյ նա կրկին չանկարծ ձգում էր ինձ—և նրա ձեռքը կրկին մերժում էր ինձ—թէև քնքշութեամբ և փափկօրէն—բայց և այնպէս հեռացնում էր։

Երբեմն նա համակւում էր ուրախութեամբ, և այդ ժամանակ նա պատրաստ էր երեխի նման խաղալ և չարութիւն անել հետս (նա սիրում էր մարմնական ամեն տեսակ խստ շարժում). մի անգամ—ընդամենը մի անգամ միայն,—մի այնպիսի քնքշութեամբ փայփայեց նա ինձ, որ քիչ էր մնում արտասուէի.... Բայց նրա քնքշութիւնն էլ, ուրախութիւնն էլ կորչում էին անհետ—և այն, ինչ որ անցնում էր մեր մէջ, ոչինչ յոյս չէր թողնում ապագայի համար—կարծես ես այդ ամենը երազում տեսած լինէի։ Պատահում էր, որ ես սկսում էի դիտել նրա խելացի, գեղեցիկ, պայծառ երեսը... սիրտս կ'սկսէր թըրթռալ և ամբողջ էութիւնս գէպի նա կը ձգտէր... նա կարծես կ'զգար, թէ ինչ էր կատարւում ներսս, թեթևակի կ'ժպտակէր երեսս—և կամ կը գնար, կամ կ'սկսէր մի բանով զբաղուել, կամ չանկարծ բոլորովին կը սառչէր, ինչպէս գիտէր միայն նա սառչել, և ես էլ անմիջապէս կուչ կը գայի և կը սառէի։ Ներս, հազիւ երբեմն դէպի ինձ արտայայտուող գորովը ամենևին հետևանք չէին իմ լուռ, բայց հասկանալի ազերսներիս.—դրանք միշտ անսպասելի կերպով էին առաջանում։ Վերջերքում խորհելով հօրս բնաւորութեան մասին, ես այն եզրակացութեան եկայ, որ ես և ընտանեկան կեանքը չէինք հետաքրքրում նրան. նա ուրիշ բան էր սիրում և լիովին վայելում էր այդ ուրիշ բանը. «ինքդ վերցրու՝ ինչ որ կարող ես, իսկ ինձ ուրիշն ձեռքը չբռնկնես. ինձ իրեն պատկանել—սրա մէջ է կեանքի բոլոր հունարը» — ահաց նա ինձ մի անգամ։ Մի ուրիշ անգամ, նրա ներկայութեամբ, ես սկսայ, որպէս երիտասարդ ռամկավար, դատողութիւններ տալ ազատութեան վրայ (այդ օրը նա, ինչպէս անուանեցինք, «բարի» էր. այն ժամանակ նրա հետ ամեն բանի մասին կարելի էր խօսել)։—Ազատութիւն,—կրկնեց նա, — իսկ դու գիտես ինչը կարող է մարդս ազատութիւն տալ։

—Ի՞նչը։

—Կամքը, սեփական կամքը, նա և իշխանութիւն կը տայ, որ ազատութիւններից գերազանց է։ Գիտցիր կամենալ—և' ազատ կը լինես և' հըրամայող կը դառնաս։

Հայրս ամեն բանից առաջ և ամեն բանից աւելի կամենում էր ապրել—և ապրում էր.... Գուցէ նա զգում էր, որ ինքը երկար չտևի վայելէր կեանքի այդ «հունարը»,—նա քառասուն երկու տարեկան մեռաւ։

Ես հօրս մանրամասնարար պատմեցի Զասեկինների արած իմ այցելութիւնու Նա կէս ուշադրութեամբ, կէս ցրուած լսում էր պատմածս՝ նստարանի վրայ նստած և մտրակի ծայրով աւազի վրայ նկարներ ձևակերպելով։ Նա երբեմն-երբեմն ծիծաղում էր, մի ինչ-որ պայծառ և զուարճալի կերպով նայում էր վրաս և կարճ հարցերով ու պատասխաններով գրգռում ինձ։

Ես սկզբում չէի էլ ուզում Զինայիդայի անունն տալ, բայց չկարողացայ ինձ զսպել և սկսայ երկինք բարձրացնել նրան։ Հայրս էլի ծիծաղում էր, ցետոյ նա մտքի մէջ ընկաւ, դրստուեց և վերկացաւ։

Ես յիշեցի, որ անից դուրս գալիս նա հրամայել էր Թամբել ձին։ Նա շատ լաւ ձի հեծնող էր—և կարողանում էր, ս. Բէրեից շատ առաջ, զբսնել ամենավայրենի ձիերը։

—Ե՞ս էլ սլիտ գամ ձեզ հետ, հայրիկ, հարցրի ես։

—Ոչ,—պատասխանեց նա,—և նրա դէմքը կրկին սովորական, անտարբերփայփայող արտայայտութիւնն ընդացաւ։—Եթէ ուզում ես՝ միայնակ գնա, իսկ կառապանին ասա, որ ես չեմ գնալու։

Նա չուռ եկաւ և հեռացաւ արագաքայլ։ Ես աչքով հետևում էի նրան—նա անհետացաւ դռների ետեւը։ Ես տեսայ, թէ ինչպէս նրա գլխարկը շարժւում էր ցանկապատի ետևում—նա մտաւ Զասեկինների մօտ։

*) Տես «Նոր-Դար» № 201.

պէտք է թղթակիցը աշխատէ ե-ղելութիւնը կատարուած օրը հաղորդելու լրագրին, եթէ կարելի է, եթէ ոչ՝ առաջիկայ պօստով։

Շատ անգամ մի օրով ուշացած ամենակարևոր լուրը կորցնում է իւր նշանակութիւնը։

Տարուայ ընթացքում թերթիս խմբագրութիւնը բազմաթիւ նամակներ չէ հրատարակել, որովհետև շատերի բովանդակութիւնն արդէն հնացած է եղել, շատերի մէջ աննշան դէպքերի վրայ երկար խորհրդածութիւններ են եղել և մեծ մասամբ անտեղի և անկապ. շատ նամակներից լուրերն են քաղուել և գտնուել են դրանց թուում և այնպիսիները, որ անկարող ենք եղել լոյս հանելու։

Բայց մեր ստացած բոլոր թղթակցութիւնների վրայ նայել ենք միմիայն ընթերցողի պահանջները, հասարակական օգուտը և թերթի բարձր նշանակութիւնը հաշուի առնելով։

Այդ պատճառով տարուայ վերջումը դառնալով մեր թղթակիցներին, յայտնում ենք մեր շնորհակալութիւնը նրանց և խընդրում ենք, որ աշակցեն խմբագրութեանս աւելի լաւ կերպով լրացուցանելու ընթերցողի պահանջները, ծառայելու հասարակական շահերին և բարձր պահելով թերթի նշանակութիւնը։

Այդ ցանկալի կատարելութեան հասնելու համար պէտք է «Նոր-Դար»-ին թղթակցողները չնեղանան, որ իրենց այս կամ այն թղթակցութիւնները չէ հրատարակուում, և չպէտք է ձգտեն թերթը իրենց գիտումներին ծառայեցնելու, այլ պէտք է իրենց գրչի կարողութեան չափը հասկանալով, ինչ որ գրում են, գրեն ճիշդ եղելութիւնը, բայց չմոռանան վերը յիշած պայմանները, որոնց պէտք է հետևեն թղթակիցները։

Նա մի ժամից աւելի չմնաց այնտեղ, բայց անմիջապէս գնաց քաղաք և միայն երեկոյեան վերադառնալ տուն։

Ճաշից յետոյ ես ինքս գնացի Զինաիդային տունը։ Ընդունարանում միայն պառաւ իշխանուհուն գտայ։ Ինձ տեսնելով, մի լի ծայրով քրքից գլխապարիկ տակից գլուխը և չանկարծ հարցրեց ինձ, արդեօք կարելի՞ է իրեն համար մի խնդրագիր ապատրաստել։

—Ոչխանութեամբ, — պատասխանեցի ես, և նստայ աթոռի ծայրը։

—Միայն տեսէք, տառերը քանի կարելի է խոշոր գրեցէք,—ասաց իշխանուհին, մի կեղտոտ թերթ դնելով առաջս. — արդիօք կարելի չէ այսօր և ել գրէք։

—Չենց այսօր էլ կատարեմ։

Կից սենեակի դուռը հապճեպ հապ բացուեց—և բացուածքից երևաց Զինաիդայի դէմքը—գժգոյն, մահաթոյր, մազերն անուշադիր ետևը ձգած,—նա նայեց ինձ վրայ մեծ բացած, սառը աչքերով և կամացուկ փակեց դուռը։

—Զինա,—Զինա,—կանչեց պառաւը։ Զինաիդան ձայն չհանեց։ Ես հնաս տարայ պատաւի խնդրագիրն և ամբողջ երեկոն նրա վրայ անցկացրի։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱԴՈՒԻՑ.—Ահա մի քանի տարի է, որ տեղիս երիտասարդներից մի խումբ է կազմուել, որոնց նպատակն է երաժշտութեամբ զբաղուել և կատարելագործուել։ Այդ խմբի անունն է «Հայ սիրողների նուագախումբ», (Армянскій любительскій оркестръ)։ Ներկայումս խումբը բաւական անդամ ունի, որի մի մասն էլ օտարազգիներից է բաղկացած։ Անդամները ամում են զանազան երաժշտական գործիքների վրայ։ Պէտք է ասած, որ դրանք շատ գեղեցիկ կերպով նուագում են նոյն իսկ ամենադժուար պիէսները։ Խմբի նպատակն է, զանազան բարեգործական նպատակներով սրուող ներկայացումներին և այլ հանդէսներին ձրիապէս մասնակցել։ Ի հարկէ, այդ պարոնների թէ կազմածքը և թէ նպատակը շատ գովելի է և թէ քաջալերութեան արժանի։ — Խմբի անդամները ցանկանալով մի հայերէն ներկայացում տալ, որի եկամուտով կարողանային նորանոր երաժշտական գործիքներ գնել խմբի անկարող անդամների համար, դիմում են տեղիս հասարակական ակմբի (կլուբի) վարչութեանը, խնդրելով ժողովարանի թատրոնական դահլիճը մի գիշերուայ համար, բայց յիշեալ հիմնարկութեան պ. «ստաբշնաները» նրանց խնդիրքը մերժում են... Դա առաջին անգամը չէ, որ յիշեալ «ստաբշնաներն, իրենց կամայականութեան շնորհիւ, ոչնչացնում են նոյն իսկ ակմբի ընդհանուր ժողովի վճիռները։ Այդպէս վարուեցան և պ. Գ. Բաշինջաղեանցի հետ, որ եկել էր այստեղ իւր պատկերների ցուցահանդէսը բանալու, որի համար խնդրել էր ձմեռային շինութեան դահլիճը *), երկու շաբաթ ժամանակով, խոստանալով վարձը վճարել։ Ընդհանուր ժողովը վճռեց դահլիճը ձրիապար տալ նրան այդ նպատակով։ Որոշեալ ժամանակը լրացած էր և պ. Բ. իւր պատկերները հակերի մէջ կապելով, կամենում էր մշակներին յանձնել, երկաթուղու կայարանը տանելու համար. յանկարծ ներս է գալիս կլուբի

*) Այդ ժամանակ ակումբը գտնուում է ամարայնն շինութեան մէջ, իսկ ձմերայինը դատարկ ընկած էր։

IX

Այդ օրից սկսուեց իմ «կնքդս»։ Ես, որքան յիշում եմ, այն ժամանակ զգում էի այն՝ ինչ որ նոր ծառայութեան մտնող մարդը զգում է,—ես այլ ևս պատանի չէի։ Ես սերտհարէ էի։ Ասացէք, որ այդ օրից սկսուեց կնքդս։ Ես կարող էի աւելացնել, որ տանջանքներս ևս նոյն օրից սկսուեցան։ Ես հալումաշ էի լինում Զինաիդայի բացակայութեան միջոցին,—ոչինչ չէր մանում խելքս, ամեն բան վայր էր ընկնում ձեռքիցս, ամբողջ օրերով լարուած մտածում էի նրա վրայ...։ Ես հալումաշ էի լինում... բայց նրա ներկայութեամբ էլ վշտերս չէին թեթևանում։ Ես նախանձում էի, զգում էի իմ ոչնչութիւնս, չիմարաբար ուռչում էի և չիմարաբար սրբկանում էի նրա առաջ—սակայն, մի անբնկնելի ոյժ ինձ ձգում էր դէպի նա և ես ամեն անգամ որ ոտք էի դնում նրա սենեակի շեմքը, երջանկութեան ակամայ զոհ բռնում էր ինձ։ Զինաիդան իսկոյն հասկացաւ, որ ես սերտհարուած եմ իւր վրայ, ես ինքս էլ, ասենք, չէի էլ աշխատում թագցնելու այդ։ Նա զուարճանում էր իմ կրքովս, չիմարացնում, երես տալիս և տանջում էր ինձ։ Շատ քաղցր բան է ուրիշի ամենամեծ ուրախութիւնների և ամենախոր վշտերի միակ ազդիչը, անձնիշխան և անպայման պատճառ լինել—իսկ ես կախուած մոմ էի Զինաիդայի ձեռքում։ Սակայն միայն ես չէի սերտհարուած նրա վրայ։ Նրա մօտ յաճախող բոլոր տղամարդկինն էլ խելագարուելու չափ սերտհարուած էին նրա վրայ—և նա նրանց բոլորին կաշկանդած պահում էր ուսինի տակ։ Նա զուարճանում էր նրանց մէջ երբեմն յոյս և երբեմն երկիւղ պարթեցնելով, իւր քմահաճոյքովն նրանց չարժելով (նա այդ անուանում էր—մարդկանց ընդհարել միմեանց)—իսկ նրանք չէին էլ աշխատում նրան դիմադրելու և սիրով հնազանդում էին։ Նրա ամբողջ կենսունակ և գեղեցիկ էութիւնն մէջ մի տեսակ հանգուցիչ խաւնուղդ կար խորամանկութեան և անհոգութեան, արուեստականութեան և պարզութեան, հանգըստութեան և չարժունութեան։ Նրա ամեն մի չարժման մէջ երևում էր նորը կախարդանք, ամեն բանի մէջ երևում էր նրա ինքնատիպ աշխոյժը։ Ներքա գիմքն անգադար փոփոխուում էր, նոյնպէս կենդանանում էր—համարեա մի և նոյն ժամանակ դա արտայայտում էր — ծիծաղկոտութիւն, մտախոհութիւն և կիրք։ Բազմազան զգացումները, ինչպէս արեգակնային քամի օրուայ ամպերի ստուերները, թեթև և արագ անցնում էին անդադար նրա

օդնական Զաւադսկին, նահանգապետ Շալիկովը և այլն։ Գիմնազիոնի տեսուչ Բրաժնիկովը կարողացել է համոզել, որից երևում է, որ ուսուցիչների թիւը 22 է, իսկ աշակերտների թիւը 229, որից 142 հոգի հայ, 55 հոգի ռուս, 3 հոգի վրացի, 24 հոգի Թուրք և 6 հոգի ուրիշ ազգերից։ Գիմնազիոնը բացուել է 1831 թուին, որպէս արքունի ուսումնարան, որ 1868-ին դարձել է պրօգիմնազիոն, իսկ 1881 թուին գիմնազիոն։ Դրագարանն ունի 3522 գիրք՝ 6372 հատորից բաղկացած։ Գիմնազիոնն ունի պանսիօն 27 հոգու համար։

—

Երկուշաբթի, նոյեմբերի 28-ին, կայացաւ քաղ. Խորհրդի նիստը։ Նախագահութեան գիւղատնտեսական ցուցահանդէսի մասնաժողովի զեկուցումը, որի բովանդակութիւնն արդէն յայտնի է մեր ընթերցողներին, զեկուցումն ընդունուեց։ Այնուհետև սկսեց քննել Ղորդանեանցի ջրմուղը քաղաքի հաշուով գնելու համար կազմուած պայմանագիրը, որ արդէն երրորդ անգամ է ներկայացուում լրատուների քննութեան։ Այս անգամ էլ քննութիւնը կիսատ մնաց։

—

Կիրակի, նոյեմբերի 27-ին, ինչպէս արդէն ծանուցել էինք, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կայացաւ Թիֆլիս»-ի Հայասիրաց բարեգործական ընկերութեան» օգտին պարահանդէս, որին բաւական բազմութիւն էր հաւաքուած։ Պարահանդէսը կենդանի անցկացաւ և տևեց մինչև առաւօտեան ժամը մօտ 3-ը։ Այնուհետև սկսեցին ցրուել։ Ըստ երևութին, ձախքը հանած, ընկերութիւնը այդ պարահանդէսից մի 400 րուբլի օգուտ ստացած պէտք է լինի։

—

Միրզիկ գիւղից. — Միրզիկ գիւղը գտնուում է Գանձակից դէպի արևմուտք 15 վերստ հեռաւորութեան վրայ և ընկած է լերան ստորոտում։ Գիւղը բաղկանում է մօտ 70 տնից։ գիւղացիները պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ. պարապում են և մայլապանութեամբ և փայտեն կրում մերձակայ քաղաքը վաճառելու։ Գիւղի դիրքը լաւ է, հողը պտղատու, օդը և ջուրը առողջարար, ժողովուրդը ընդհանրապէս ապրում է նահապետական պարզ կեանքով և շատ ետ է մնացել լուսաւորութեան կողմից։ Գիւղը ունի մէկ եկեղեցի կոփածոյ սրբատաշ քարից շինած, ունի և մէկ քահանայ, որը տարին մէկ անգամ է ժամ ասում, ս. Յարութեան տօնին։ Միրզիկեցիների քահանան ծերացած լինելով և անհմուտ եկեղ. արարողութեան, գիւղացիներին աջօղուել էր մէկ քահանայ ընտրել և Թղթերը առաջարկել էին անցեալ յունվարից հոգևոր կառավարութեանը, բայց այժմ էլի լոյս են ընկել տեղացի երիտ. տիրացուները, որոնք մի քանի պարոններին միջոցով զանազան խնդիրներ են գրել տալիս հասարակութեան անունով, (առանց և հարկէ հասարակութեան յայտնելու) ծանկապէս կեղծ ստորագրութիւններ են շինում և Ռոկանապատ գիւղի տանուտէրին վաւերացնել են տալիս և առաջարկում հոգևոր իշխանութեանը։ Պրանով նրանք ուզում են խանգարել և դադարեցնել տալ գիւղացիների ընտրած քահանայացուի գործի կանոնաւոր ընթացքը։ Բայց մենք յոյս ունինք, որ հոգևոր իշխանութիւնն այդ տեսակ ծանուցի և անտեղի խնդիրները ետ կը դարձնէ և կամ կենթարկէ օրինաւոր քննութեան, չխանգարելով մեր բնաւրած քահանայացուին։

—

Մայրաքաղաքի Թերթերի ասելով, նոր օրէնսդրական յաւելուածներ և փոփոխութիւններ են մշակուում ապօրինի ծնունդների մասին։ Մինչև այժմ մեծ դժուարութիւններ կային ապօրինի ծնունդներին որդեգրելու և նրանց խնամելու մասին։ Այժմ այդ դժուարութիւնները պիտի բարձուին։

—

Կ. Պոլսի Թերթերը հաղորդում են. —Գոհութեամբ ինիմանանք թէ Հ. Միացեալ Ընկերութիւնն իրեն բարերար անդամ անուանած է մեծանուն նկարիչն Պ. Այվազովսքի որ արդէն պատուոյ անդամ էր Ընկերութեան. Միացեալ Ընկերութեան միւս բարերար անդամներն են երջանկայիշատակ Գեորգ Կալոդկինսոն և Հոգելոյս Նեռսէս Պատրիարքը։

—«Մօնիդիօռ» կը ծանուցանէ թէ անգլիական դեսպանատան առևտրական կցորդը կարին ուղեւորեր է, իւր կառավարութեան կողմէ պարտուն

բժիշկն ամենից աւելի էր ձանձրանում օրիորդին—և ամենից աւելի էլ սիրում էր նրան, թէև թէ երեսին և թէ հետևից լսում էր նրա վրայ։ Օրիորդը յարգում էր նրան, բայց աւելի չէր փախցնում և շատ անգամ էլ, առանձին, չարախնդ գոհութեամբ նրան զգալ էր տալիս, թէ նա էլ իւր ձեռքումն է։ «Ես նազկթող եմ, ես անսիրտ եմ, ես դերատանական բնաւորութիւն ունիմ,—ասաց նա մի անգամ նրան իմ ներկայութեամբ,—ըհ, լաւ, տուէք ուրեմն ձեր ձեռքը, ես գնգասեղով կը ծակեմ նրան, դուք կամաչէք այս երիտասարդից, ձեր ձեռքը պիտի ցաւի, բայց և այնպէս դուք, Աշմարտասէր պարոն, համեցէք ծնծաղել»։ Լուչինը կարմրեց, շուռ եկաւ, չրթունքները կծեց և վերջապէս մեկնեց ձեռքը։ Օրիորդը ծակեց ձեռքը և, յիրաւի, Լուչինը սկսեց ծնծաղել... օրիորդն էլ էր ծնծաղում գնգասեղը բաւական խորը խրելով և նայելով նրա աչքերին, որոնց Լուչինը ի զուր աշխատում էր դէս ու դէն շուռ ածել...

Մ. Պ.

(Կը շարունակուի)

ունենալով տեղեկագիր մը պատրաստել այդ նահանգին տնտեսական և արուեստական վիճակին վրայ։

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անձամբ կը պատրաստէ իւր Պատրիարքական անդրանիկ կոնդակն, որ գլխաւոր և աշխարհաբար պիտի լինի և տեսարակի ձեւով պիտի հրատարակուի։

—

Առաջիկայ 1889 Թուին առևտուր անելու վկայական ստացողներից առաջացած գումար առ 29-ն նոյեմբերի հասել է 1,644 ր. 90 կ. և պատկեներից—1,977 րուբլի։

Իսկ քաղաքային ջրմուղից օրական մինչեւ Թուով ստացուում է 140 րուբլի։

—

Կովկասի հնագիտական յանձնաժողովը ոչնչացնելու մասին լուրերը էին տարածուել։ Այժմ «Тиф. Лист.»-ը լսել է, որ բարձր շրջաններում այդ միտքը բոլորական որոշում պիտի ստանայ, այսինքն, Կովկասի հնագիտական յանձնաժողովը պիտի պահպանէ իւր գոյութիւնը։

—

ՋԱՀՈՒԿ գիւղից (Հին-Նախիջևանի գաւառ). — Գողութիւն, աւազակութիւն, թալան... պակաս չէ մեզանում. գիշեր չէ պատահում, որ հայհարայ չլսենք գիշեր մէջ—մէկի տունն են կոտրել, միւսի տաւարը տարել, երրորդին ձանապարհին թալանել։ Մի խօսքով ամեն կողմ աւազակութիւն է։

—

Նոյեմբերի 29-ի գիշերը յանկարծամահ է եղել Թիֆլիսի մահուտ ծախող հին վաճառականներից մէկը—Սահիան Յոմիրեանը։

—

«Рус. Вѣд.»-ն հաղորդում է, որ հարց է բարձրացրած գիւղական տուրքը փոխարկնել իւրաքանչիւր առևտրական շրջագաւառ գումարի համապատասխան։ Միևնոյն ժամանակ մտադրութիւն կայ իւրաքանչիւր առևտրական ձեռնարկութեան համար տուրքի առանձին չափ նշանակել։

—

Ստատիստիկական կենդրոնական կոմիտէի հաւաքած տեղեկութիւններին հայելով, ամբողջ Ռուսիայում կայ 667 վանք, որից 420 ազամարդկանց, իսկ 247-ը կոյսերի։ Այդ ընդհանուր Թուից 613-ը Ուղղափառ Ռուսիայումն է գտնուում, 31-ը Կովկասում և 23-ը ասիական երկիրներում։ Հասկանալի է, որ այս առաջադասականների վանքերը Թիւն է մեայն։

—

Ներկայումս Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան խորհրդում, «Кав.»-ի ասելով, ձեռնարկել են կազմելու առաջիկայ տարին Թիֆլիսում կայանալիք գիւղատնտեսական ցուցահանդէսի նախագիծը։

—

Ռուսիայի արտահանութեան գլխաւոր նիւթերից մինը կազմում է ցորենը։ Սակայն, ինչպէս երևում է, այս տարի ցորենը անցեալ տարուայ չափ չէ արտահանուում, որովհետև երկաթուղային կայարաններում մնում են դիզուած, իսկ շատ ամբարատէրը էլ, Նոր-Նախիջևանի մեր Թղթակցի ասելով, պահում են, սպասելով, որ Թանկանայ։ Նոյեմբեր ամսի 6-ից մինչև 13-ը Ռուսիայից արտահանուած է ընդամենը 8.362,959 պուդ, այսինքն անցեալ տարուանից 1.250,000 պուդ պակաս։ Բայց մինչև այդ ժամանակը Ռուսիայից արտահանուած ցորենի քանակութիւնն աւելի է, քան Թէ ուրիշ տարիներում։

Մ. Պ.

ԾՈՎԻՆԱՐ *)

Հէքիաթ. գրեց Սարգիս Քամալեանց. Թիֆլիս. 1888 Թ. տպարան Մ. Ռոտինեանի։

Հէքիաթների նշանակութեան մասին արած սոյն մի քանի համառօտ նկատողութիւններից արդէն կարելի է հասկանալ, Թէ որքան մեծ է գրքոյկս օգուտը Թէ ժողովրդի ներկայ կեանքն ու փիլիսոփայութիւնն հասկանալու և Թէ անցեալ կեանքի յիշողութիւնների փշրանքից մեր անցեալի մուԹ կողմերը լուսաբանելու համար։ Մանաւանդ մեզ համար հէքիաթներն աւելի նշանակութիւն ունեն ներկայումս՝ երբ դեռ մեր լեզուն չէ կազմակերպուած, երբ օտարամուտ բառերն և դարձուածները հեղեղում են մեր գրականութիւնը՝ տպականելով, լուծելով նրան։

Ուստի էէ կարելի ուրախութեամբ չողջունել այդ ուղղութեամբ եղած իւրաքանչիւր ձեռնարկութիւն և աջողութիւն չցանկալ նրան։ Ա.հա ենէ «Նոր-Դար»-ը մինչ այժմ աշխատել է մեր գրականութեան մէջ յայտնուող, իւրաքանչիւր երևան եկող հէքիաթի վրայ օրքան կարելի առանձնապէս չեշտել և հասարակութեան ուշադրութիւնը դրա վրայ դարձնել։ Գեր. Սրուանձտեանցի «Մանանան», «Համով-Հոտով»-ը և այլն, պ. Տիգրան Նաւասարդեանցի «Հայ - ժողովրդական հէքիաթներ»-ը և այլն և այլն մինչ համակրութեամբ է ընդունել «Նոր-Դար»-ը **)։ «Նոր-Դար»-ը ուրախութեամբ ողջունում է և պ. Սարգիս Քամալեանցի «Ծովինար» հէքիաթը, որ անցեալները լոյս տեսաւ Թիֆլիսում և որի մասին արժէ մի քանի խօսք ասել։

Ժողովրդական բանահիւսութեան ժողովրդական բարբառով հրատարակութիւն ի մէջի այլոց այն նշանակութիւնն էլ ունի, որ ընթերցողը մէջից ունի ծանոթանալու այս կամ այն գաւառի բարբառի, ոճերի, քերականական կազմութեան, բառերի հետ։ Եւրոպական իւրաքանչիւր լուսաւոր ազգ ունի ոչ միայն մի ընդհանուր գրականական լեզուի համար հոգս, մշակուած քերականութիւն, բազմատեսակ բառարաններ, այլ և իւրաքանչիւր բարբառի համար քերականութիւններ, բառարաններ,—վերջին. Ներս առաջնակարգ օժանդակ միջոցներն են առաջինների ծաղկման համար։ Այդպիսի փորձեր եղել են և մեր մէջ. Հալաբերդեանը 50-ական Թուականներին Թիֆլիսի բարբառի քերականութիւնը կազմեց, Սարգսեանը 80-ական Թուականներին՝ Ագուլեցի բարբառի քերականութիւնը, պ. Պատկանեանը նոյն Թուականներին Նոր-Նախիջևանի բարբառի քերականութիւնը.... Բայց դրանք փորձեր էին միայն, որոնց զարգացումը ապագայումն է և որոնց վրայ պիտի հիմնուի մեր ներկայ գրականական լեզուի քերականութիւնը։ Սակայն հէքիաթների այդպիսի հրատարակութիւնները այն պակասութիւնն էլ ունեն, որ նրանք մատչելի են դառնում մեայն նոյն բարբառով մեծացողներին և մանագէաներին, իսկ հասարակութեան մեծ մասը համարեա ոչինչ չէ հասկանում նրանցից։

*) Տես «Նոր-Դար» № 200.

**) Այս օրերս առիթ ունեցանք տեսնելու պ. Ներ. Լալայեանցի «Բուրմունք Գուգարաց» ընդհանուր վերնագրի տակ հաւաքած Ախալցխայի գաւառի հայ-ժողովրդի հէքիաթների, առակների, հրգերի, մանկական խաղերի, ոՀերի, բառերի, անէծքների, օրհնէնքների, չուտասելուկների և այլն հարուստ հաւաքածուն, որի հրատարակութիւնն ցանկալի էր չուտով տեսնել։

Բացի դրանից, երբեմն գաւառական շատ բառեր, դարձուածներ, որոնք կարող էին գրականութեան մէջ գործածելով լեզուին իսկական հարստութիւն տալ, մնում են անգործածելի, որովհետև դրանց տեղէն գործածելու համար էլ հարկաւոր է առանձին ընդունակութիւն ունենալ։ Ընթերցումս մեր լեզուն ապրատ է վերացական գաղափարներ, մտքեր արտայայտելու համար, որքան տանջանք են կրում մեր Թարգմանիչները ամեն մի նոր ձեռնարկութեան միջոցին—որովհետև լեզուն չունի բառեր, դարձուածներ, խոկ ով կարող է աւելի լաւ, աւելի տեղին գործածել մտքերի համապատասխան գաւառական բառերը, ոՀերը, Եթէ ոչ նոն, որ ընտել է այդ բառերին։ Շատ անգամ պատահում է, որ մի գաւառում մի բառ, մի դարձուած բոլորովին այլ նշանակութիւն ունի քան մի ուրիշ գաւառում, ուրիշ բարբառի մէջ—հարկաւոր է նրանց զանազանել կարօղանալ։ Ով չգիտէ օրինակ, որ Կովկասեան հայերի շատ բարբառներում «մտիկ անել» գործ է ածւում որպէս «նայել», բայց ով գիտէ, որ նոյն «մտիկ անել»-ը Նոր-Նախիջևանի և Ղրիմու բարբառում նշանակում է «լսել», «լսել»։ Ահա այդ պատճառով գրականութեան համար մեծ նշանակութիւն ունին այն ժողովրդական գրուածքները, որոնց հոգին, ոՀերը, դարձուածքը, բառերը, մտածելու եղանակը և այլն և այլն ժողովրդական մնալով հանդերձ, գրականական ձև ունենն.—Ահա այդպէս է գրուած և պ. Սարգիս Քամալեանցի «Ծովինարը»։

Կարելի չէ վերջին ժամանակներս մեր գրականութեան մէջ չնկատել մի ուղղութիւն—ժողովրդական ձևով գրելու ձգտումը։ Ի հարկէ, դա շատ քչերին է աջողւում, բայց աջողւում է։ Այդ ուղղութեամբ մեր մէջ գրողներից նշանաւոր է պ. Աղայեանը, որին աշխատում են հետևել շատերը և... լաւ են անում։ Պ. Քամալեանցն այդ ուղղութիւնն ունի, և նրա այդ ուղղութեամբ գրած մի քանի գողտրիկ պատկերներն անշուշտ ընթերցողը կարդացած կը լինի «Նոր-Դար»-ի մէջ։

Մ. Պ.

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ *)

ՄԻ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԻՒԿԵՐՏ

Բաւարացիները ծագում են հայերից, Բիւկերտի մի թարգմանութիւնը հայոց լեզուից և նրա «Աբշակ Բ.» ողբերգութիւնը»։ «Աբշակ Բ.»-ն առարկայ բանաստեղծութեան։

(Վերջ)

Գերմանիայի, մանաւանդ բողոքական ժողովուրդը չունի շատ եկեղեցական տօներ, բայց նրա մէջ անպակաս են հանդէսները, որոնք կատարուում են ի պատիւ իրենց դիւցազների, մանաւանդ գիտութեան ներկայացուցիչների։ Բացի բազմաթիւ արձանիներից, որ կանգնած են այդ անմահ գործիչների յիշատակին, տօնում են երախտագէտ գերմանացիները ծննդեան, մահուան յոբելեաններ։ Այս կողմից բանաստեղծները, շատ հասկանալի պատճառով, աւելի են տօնում. Գիօթէյի, Շեյլէրի անունով առանձին ընկերակցութիւն (Gesellschaft) կան, որոնց նպատակն է իրենց պաշտելի և մեծ բանաստեղծների անունն ու յիշատակը միշտ վառ պահել ժողովրդի մէջ, տպելով նրանց անտիպ գրուածքները, ժամանակներով հրատարակել արդէն տպուածները, պահպանել ինչ որ նրանց անուան և կամ յիշատակի հետ կապ ունի և այլն և այլն։ և քանի որ գերմանական այս մեծ ազգն անթիւ գործողները և հնչակաւոր բանաստեղծները ունի, ուստի անպակաս են նրանց մէջ յոբելեանները. մարդ մխիթարւում է տեսնելով, Թէ ինչպէս այս մեծ ազգը իւր գործիչներին յարգել գիտէ։ Մխիթարական երևոյթներ սկսել են մեղնում էլ երևան գալ։ Բայց որքան մեծ է տարբերութիւնը, մենք դեռ որքան հեռու ենք։ Ակամայից ընկնում ես մտածմունքների մէջ, մերը վայրկենական է կ ա ր ծ ե ս...

Մայիսի 16-ը մտենում էր Բիւկերտի ծննդեան հարիւրամեակն էլ լրանում էր, և ահա գերմանական համարեա բոլոր լրագիրները յօդուածներ էին նուիրում նրա յիշատակին, պատկերազարդ հանդէսները տալում էին օրուան դիւցազնի պատկերը, գրավաճառանոցները զարդարում էին բոլոնց Թափանցիկ ապակին լուսամուտները նրա լուսանկարով, որովհետև ամեն վաճառ էին հանուած. իւր ընտանիքը այս առիթիւ հրատարակում է հեղինակի անտիպ գրուածքներից մի մասը, տպագրում են նոր և փառաւոր հրատարակութիւններ նրա երկասիրութիւններից, երևում են նոր կենսագրական փորձեր, կատարում են հանդէսներ. Թերևս մի այլ տեղ ծրագիր է կազմուում օրուայ դիւցազնին մի արձան էլ կանգնեցնելու և այլն և այլն. իսկ ուսանողները, գերմանիայի այդ անհոգս, բայց ազնիւ որդիները իրենց կողմից նոյնպէս ետ չեն մնում իրենց յարգանքը ցոյց տալու բանաստեղծին. նրանք, գիտէք ինչ են անում, ընթերցող, նրանք աշխատում են աւելի և աւելի ծանօթանալ Բիւկերտի հետ և ուսումնասիրել նրան, նրանք կարդում են դասախօսութիւնները հեղինակի մասին։

Յունիսի 4-ն էր. մի երեկոյ Մինհենում հրաւիրուած էինք մի գրական-պատմական ընկերութեան ժողովին, այնտեղ ահա իմացայ այս հետաքրքիր տեղեկութիւնը. Թէ Բիւկերտը ինձ անյայտ մի Թարգմանութիւն ունի հայերէնից և գրել է մի ողբերգութիւն «Աբշակ արքայ» անունով։

Բիւկերտը մի լեզուաբան քանքար էր, հետևողը (Forscher), արուեստագէտ (Künstler) և բանաստեղծ. Նա հարստացրեց, բացի անթիւ գրուածքներից, իւր Թարգմանութիւններով մանաւանդ արևելեան լեզուներից, պարսկերէնից և սանսկրիտից (առաւելապէս ըհգվեդայից) իւր ազգի—գերմանացիների— գրականութիւնը։

Նրա կենսագիրն ասելացնում է. «Բայց այս բոլորով չէ հատնում լեզուագիտական նիւթը, որը նա իւրացրել էր։ Մի Թարգմանուած ողբերգութիւն «Աբգար Օրսալի» (König Orsali) անուամբ, վկայում է, որ նա հայերէն էլ ուսումնասիրել էր» *)։—Թէ այս ինչ գործ է, ինձ անյայտ է։

Նոյն կենսագիրն ասում է. **) Բիւկերտը փորձում էր դրամաների տիպերով (Bilder) մարդկութեան զարգացման պատմութիւնն ամենահին ժամանակից մինչև նորագոյն ժամանակը ներկայացնել մեզ։ Այս տեսակէտից միայն նայելու է իւր այսուհետև չարադրելի դրամաների վրայ, դրանցից մինն է և «Աբշակ արքայ Հայոց» ողբերգութիւնը (Trauerspiel) 2 մասի բաժանուած։

Մի քանի կտորներ (Proben) այս երկասիրութենից հրատարակուած են 1842 Թուականին Morgenblatt-ում, մը-

*) Fridrich Ruckert, von Dr. L. Beyer. Frankfurt am Mein 1868. եր. 304.

**) Տես նոյն. 212 եր.

նացեալը գտնուում է իւր անտիպ Թղթած գրուածքների մէջ։

Ցարգելով Բիւկերտի բազմակողմանի քանքարը, պէտք է միևնոյն ժամանակ ասել, որ նա իրրև դրամատուրգ ոչ մի նշանաւոր գործ չունի, ուստի Թէպէտև դեռ չենք կարդացել այս մեզ համար լինքն ըստ լինքեան հետաքրքիր երկասիրութիւնը, բայց կարող ենք ասել, որ գժուար Թէ, եՀէ երբ և իցէ բոլորովին լոյս տեսնի, մի նշանաւոր գործ լինի և մեծ արժէք ունենայ, ուստի և մենք Dr. L. Beyer-ի հետ կարող ենք ասել, «բեմական գրուածք» (Bühnenstück) չէ *)։

Հետաքրքիր կէտն այն է, որ Բիւկերտի պէս մարդը ինչպէս է ըմբռնել մեր Աբշակ (անշուշտ բ-ը պիտի լինի, Թէպէտև որով չէ ասուած) անբաղդ արքայի նշանակութիւնը, որին Բիւկերտ, ինչպէս նրա կենսագիրն է ասում, տիեզերական պատմութեան հանգոյցներից (Wendepunkf) մինն է համարում։ Բայց այս առաջին անգամը չէ, որ Աբշակը նիւթ է տալիս օտարների բանաստեղծական արտադրութեան. մօտ երկու տարի առաջ Մ. Հաբեբեանդտ, Վիեննայի կայսերական Թանգարանի վերատեսուչը, «Աբշակ արքայ» վերնագրով գերմաներէն մի ուսանելուր հրատարակեց 1886 Թուի դեկտեմբերի մէկին, որի Թարգմանութիւնն ընթերցողը կը գտնի Վիեննայի Մխիթարեան հայրերի ձեռքով հրատարակուող «Հանդէս ամսօրեայ»-ի 1887 Թուականի 2 համար 25—26 եր.

Աբշակ բ-ը վառել է և մեր գրողներից ոմանց, ՊեշիքԹաշլեանի և Հ. Խորէն Նոր-Պէյի խանդը. Սրանք էլ ունին համանման երկասիրութիւններ, որոնցից վերջինի գրուածքն աւելի յայտնի է մեր ազգին։

Այս բոլոր փորձերը բանաստեղծական պարզ ապացոյց են, որ Աբշակ բ. շատ լաւ դրամայի նիւթ է, բայց ափսոս որ մեր ողբալի քաղ Աբշակը, դեռ իւր արժանաւոր ողբերգակը չունեցաւ։ Ցուսանք և սպասենք, որ նոր սերնդից մի այդպիսին պիտի ծագի։

Հ. Ճ.

*) Այս տողերը գրելուց մի ժամանակ յետոյ, մենք առիթ ունեցանք Morgenblatt-ում հրատարակուած հատուածները կարդալ. կարող ենք ասել, որ մենք չենք սխալուած. գոնեայ այս մեր համեստ կարծիքն է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՂԱՒԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ.—Բերլինից հեռագրում են ռուսաց ԹերԹերին. «Այստեղ ամենահակասական լուրեր են տարածուած Վիլհէլմ կայսրի տկարութեան մասին։ Ինչքան կարելի է դատել, այդ տկարութիւնը ոչինչ ծանր վտանգ չէ պատճառում։

—Գերմանական Վիլհէլմ կայսրը աւստրիական Ֆրանց-Յոզէֆ կայսրի քառասնամեայ կառավարութեան յոբելեանի օրը ուղարկել է շնորհաւորական մի հեռագիր, որի մէջ, ի մէջև այլոց, հաստատ համոզումն է յայտնում, որ աւստրիա-գերմանական դաշնակցութիւնը հաստատուած է ամենապինդ հիմքի վրայ։

ՆԻՊՈՍ.—Սուաքիմի խնդիրը դեռ էլի զբաղեցնում է ոչ միայն եգիպտական կառավարութեան, այլ և անգլիական և օսմանեան կառավարութիւններին։ Սուաքիմ քաղաքը համարեա Թէ պաշարուած է ապստամբ արաբների խումբերով։ Իսկ Սուաքիմը ռազմագիտական մեծ նշանակութիւն ունի վերին Նեղոսի

չջապատի երկիրների և Աֆրիկայի խորքերի համար։ Նոյեմբերի 19-ին անգլիական պատգամաւորների ժողովում Ֆերգիւսսոնը բացատրել է, որ վտանգի ենթարկուած Սուաքիմը, առայժմ, եթէ նրան չջնջապատող Թշնամիներին չկարողանան էլ հեռու մղել, անհնար է, որ Թշնամիների ձեռքն ընկնի։ Բայց անհրաժեշտ է նրան աւելի ևս ամրացնել, Աֆրիկայում գերաւաճառութեան դէմ աշխուժութեամբ մարտնչելու համար, ուստի և եկեղեցական բանակը պիտի զօրացնեն նէգրների երկու բատալիոնով և ձիաւորների երկու էսկադրոնով։

Թիւրքիա.—Գերմանական և անգլիական կառավարութիւնները միասին դիմել են Թիւրքիային, նրան առաջարկելով միանալ երեից հետ գերառաճառութեան առաջն առնելու նպատակով համերաշխ գործելու։ Թիւրք կառավարութիւնը մերժել է այդ առաջարկը պատճառաբանելով, Թէ առհասարակ Աֆրիկայում գերուածները բերուելով Թիւրքիա, վաճառւում են այնտեղ և նրանք դառնում են ոչ Թէ գերի, հապա սպասաւոր։ Բացի այդ, Թիւրքիայի համար շատ դժուար բան է մահմեդականների դէմ մահմեդական զօրք գործ ածել։

—Սուլթանը քննելով Թիւրքական կառավարութեանը, միջին—եւրոպական դաշնակցութեան կողմից եղած առաջարկութիւնը, որպէս պի նա միանալ դաշնակցութեան, աւելի քան երբ և իցէ համոզուել է, որ Թիւրքիայի համար աւելի ձեռնտու է չգոզք մնալ բոլորովին։

Սերբիա.—«Daily News»-ի Թղթակիցը հեռագրում է յիշեալ ԹերԹին, որ վերջին ժամանակներս լուր է տարածուած, Թէ Միլանը միացել է միջին-եւրոպական դաշնակցութեան։

—Պարիզի ԹերԹերին հեռագրում են Տրիեստից, որ պետր կարագէօրգեւիչը Աբբայեայում ընտանեկան խորհուրդ է կազմել, որպէս պի քննեն Սերբիայում կատարուելիք մօտալուտ դէպքերը։ Ինչպէս յայտնի է, կարագէօրգեւիչը սերբական գահի Թեկնածու է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆիգարօի վրէժխնդրութիւնը.—Անցեալները Հօլանդիայի փոքրիկ քաղաքներից մինում հետևեալ քրէական գործն էր քննւում։ Վարսավիրայ Լեխենը և ոսկեղենների մեծ խանութի ունեցող մի պարոն՝ Գօն առնուեով, պատյտ էին գալիս մի երիտասարդ, ձեռնոցները չհնող հնոջ շուրջ։ Կինը նախապատուհանն տուեց Գօնին, որը որպէս հարուստ մարդ կարողանում է ձեռնոցագործին «Թանկագին» ընծաները տալ և շուտով էլ դարձաւ գեղեցիկ փակչելնի սրտի տէրը։ Ինչ ասել կուզէ, որ Լեխենն գլուխ չեկաւ այդ բանը և նա վճռել էր վրէժն հանել իւր բաղդատուր աւոյիանից։ Դէպքը շուտով ներկայացաւ.—մի անգամ ոսկեղենների առևտրական Գօնը մտնում է վարսավիրայ Լեխենի խանութը, որպէս զի իւր մազերը կտրել տայ։ Լեխենը նրա տեսքից իւր հին երն և ական ԹոԹափել, սուր մկրատով կտրեց նրա երկու ականջները էլ։ Գօնը սկզբում շուարած մնաց, բայց երբ Լեխենը պատրաստւում էր նրա քիԹն էլ կտրելու, դժբաղդ Գօնը վեր Թռաւ տեղից և սկսաւ օգնութեան կանչել։ Նրա ձայնի վրայ հասնում են մարդիկ և նրան կալանաւորում։ Դատարանը Լեխենին դատապարտեց 6 տարուայ բանտարկութեան և 150 Ֆրանկ տուգանքի վնասուածի օգտին, որպէս պի այդ գումարով նա արհեստական երկու ականջ դնէ։

* *

Բռնցամարտիչ մահը.—Անգլիայի Կլասկէմ քաղաքում մօտերքս վախճանեցաւ հռչակաւոր ցօմ Կինգը, որ անուն ստացաւ բռնցամարտու-Թեան մէջ անյաղԹելի լինելով։ Նա իւր մահից յետոյ Ժողել է 120,000 Ֆունտ սաէրլինգ։ Նա վերջին ժամանակներս ապրում էր իւր դրամագլխի տոկոսներով։ Այդ մարդին, որի արհեստն էր ուրիշների քիԹ ու ատամները ջարդոտել, արիւնաշաղախ անել, Թաղեցին ամենափառաւոր կերպով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

29 Նոյեմբերի։

Լօնդօն 98,05 ը., 97,55 ը., 98,25 ը.
Համբուրգ 48,20 ը., 48,05 ը., 48,15 ը.
Պարիզ 38,75 ը., 38,50 ը.
Պօլուխմպերկաւ . . 7 ը. 87 կ. սակ.
Մաքս. կուպօն 157 ը. 50 կ. սակ.
ԱբծաԹ . . . . 1 ը. 18 կ. գն.
Բօրսային դես. 6¾ և 7⅛%
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 98 ը. 50 կ. սակ.
2-րդ . . . . . 97 ը. 75 կ. սակ.
3-րդ . . . . . 97 ը. 50 կ. գն.
4-րդ . . . . . 97 ը. 50 կ. գն.
5-րդ . . . . . 97 ը. 50 կ. գն.
6-րդ . . . . . — ը. — կ. սակ.
100 և 1000 ը. արևելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 97 ը. 25 կ. սակ.
2-րդ . . . . . 97 ը. 25 կ. սակ.
3-րդ . . . . . 97 ը. 12 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան
տոմսեր . . . 270 ը. — կ. սակ.
2-րդ . . . . . 242 ը. 25 կ. գն.
5½% բէյնտեր . 101 ը. 75 կ. գն.
Ոսկէ բէյնտ . . 179 ը. — կ. գն.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր.
օբլիգ. . . — ը. — կ. գն.
Պետական բանկի
4% տոմսեր . . 81 ը. 87 կ. սակ.
ԵրկաԹուղու բէյնտ — ը. — կ. գն.
Ազնուակ. հող. բանկի գրաւաԹղԹերը — ը. — կ. գն.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը վերջում հաստատուն է։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Գ ե օ կ չ ա յ, Օտարականին.—Ուրախութեամբ կուղարկէնք, Թէ այդ գրութիւնից աւելորդ օրինակ գանուէը մեզ մօտ։ Շատ տեղերից ուղել են և ամեն տեղ էլ ուղարկել են արտագրել տալով։ Գրեցէք մինին, Թող գայ արտագրէ տանէ, կամ ուղարկեցէք մի բուբլի՝ արտագրել տանք ուղարկենք։

Հարցնում էք, ինչու՞ «Նոր-Դար»-ում չենք հրատարակում։ Մի Թէ ձեր հարցմունքի պատասխանը վաղուց «Նոր-Դար»-ում չէք կարդացել։

—

Շ ա մ ա խ ի, Պ.-ին. — Հաղորդեցէք լուրերը, տեղեկութիւնները. մի սպասէք, որ նախ դուրս գան գրուածները, որ յետոյ հաղորդէք նոր լուրեր։ Շատ անգամ լմբագրութիւնս յետաձգում է առաջ ստացուած ԹղԹակցութիւնները, որովհետև նրանք առօրեայ ընԹացիք կեանքին չվերաբերուելով, չեն կորցնիլ իրենց նշանակութիւնը։

—

Մ օ ղ դ ո ս, Ականաւեսին.—Այդտեղի գալոցի վերաբերութեամբ ձեր գրած նամակը չենք կարող հրատարակել, որովհետև այդ բովանդակութեամբ նամակները, և զուր տեղը աղմուկ բարձրացնելով, գործին չեն օգնում, այլ վնասում են։ Մենք սովորաբար մեր գալոցների վերաբերեալ գրութիւնները շատ հազիւ և տհաճութեամբ ենք հրատարակում։ Այսպէս չհրատարակեցինք մենք Ս. խալցեանի գալոցում տեսչական հարցի վերաբերեալ հետզհետէ ընտացած Թիւ և դէմ գրութիւնները, աչքի առաջ ունենալով միմիայն գալոցի և մանաւանդ այժմըս այնտեղ պաշտօն վարող ուսուցիչների շահերը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՇՈՒԼԱՒԵՐՅԻ ԳՐԻԳՈՐ (Գիգոլ) ԱՄԻՐԲԷԳԵԱՆ (արհեստաւոր)։ Երկու ամիս առաջ Շուլաւերցի Գրիգոր (Գիգոլ) Ամիրբէգեանը Թիֆլիսից ԲաԹում գնալով մինչև օրս նրա կինը նրանից նամակ չէ ստանում և մնացել է իւր զաւակի հետ անօգնական և Թշուառ դրութեան մէջ։ Բարի մարդիկ, որոնք Գիգոլին ճանաչում կամ տեսնում են, Թող յայտնեն նրան, որ իւր կինը գիր չէ ստանում և անհամբեր նամակի և տեղեկութեան է սպասում։

(Խմբ.) 3—3

№ 4711
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՕՁԱՌ

Երեից գերազանց յատկութիւններով մեծ հռչակ են ստացել. նրա բաղադրութեան մէջ մեծ տոկոս գլիցերինի լինելը, ԹեԹև փրփրելը և գերազանց հոտը բոլորովին տարբերում են միւս գլիցերինի օճառներից։

ԱՌԱՒԵԼԱՊԷՍ ԱՌՍԶԱՐԿՈՒՄ ԵՆ՝

№ 4711. ՎԱՐԴԱԳՈՑՆ ԲԻՒՐԵՂԵԱՑ ՕՃԱՌ.
№ 4711. ՊՈՒՏՂԱԳՈՑՆ-ԲԻՒՐԵՂԵԱՑ ՕՃԱՌ.
№ 4711. ՅԱՓՐՈՒԿԱԳՈՑՆ-ԲԻՒՐԵՂԵԱՑ ՕՃԱՌ.
№ 4711. ՕԴԵԿՈԼՕՆԵԱՑ ԲԻՒՐԵՂԵԱՑ ՕՃԱՌ.
№ 4711. ՄԵՆԱՎԱՃԱՌ ԳԼԻՑԵՐԻՆԻ ՕՃԱՌ.

Վաճառւում է Ռուսիայի ամենալաւ դեղատնային և անուշահոտ իրերի մագազիններում։

(Մ.) 3—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Սամուէլ Սմայլս
ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Գերման. Թարգմ.
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Գինն է 1 ը. 50 կ.

Նոյն Թարգմանչի
Շմխեմ, Բենիամին Ֆրանկլին,
2 տիպ . . . . 40 կ.
— Դէորգ Վաշինգտօն
2 տիպ . . . . 60 »
— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . 1 ը. — »
— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 ը. 20 »
(Ձանազարշի ծախքը Թարգմանչի վրայ է)։

Վաճառւում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріинско-Анановское училище.

ԽԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԽՅՃՈՑ ԳԼԽԻ ՄԷՋ

Ինչպէս ազատուի մարդ այդ տկարութիւնից

Բացատրութիւնների մասին դիմել, ռուսերէն կամ ֆրանսերէն լեզուով գրած, Ի. Գ. Նիկօլաօնին 4 rue, Drouot. Պարիզ (Ֆրանսիա)

15—2

ԱՐԴԵՆ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿՆ Է ԵԻ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

„ՔԵԱՐԱՄԻ ԵՒ ԱՍԼԻԻ“

ՀԷՔԻԱԹԸ, ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ։

Փոխադրութիւն Թիւրքերէնից

Աշխատասիրեց ԱՇՂ.-ՋԻՒԱՆԻՆ

Տպւում է Ալէքսանդրապօլ, Գ. Սանօյեանցի տպարանում։

6—1

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿՆ Է ԵԻ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ԻՄ ԹԱՐԳՄԱՆԱԾ՝

„ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ“

Հեղ. պրօֆէսսօր Ա. Գաբրիէլեան։

Թէև ցանկութիւնս էր, ինչպէս և յայտարարել էի, մինչ Սեպտեմբերը լոյս ընծայել աշխատութիւնս, բայց ինձնից անկախ պատճառով, չկարողացայ ժամանակին կատարել խոստումս։— Ուստի ներողութիւն խնդրելով յարգելի բաժանորդներից, խնդրում եմ այն յարգելի անձանց, որոնք բաժանորդ դառնելու նեղութիւնը յանձն էին առել, բարեհաճեն ուղարկել բաժանորդագրերը և դրամը հետևեալ հասցէով. Тифлисъ, Учителю Арм. Дух. Сем. Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Գրիգոր Շահբուդաղեանց

3—3 (Խ.)

„ՆԵՂՈՍ“

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Լրագրոյս տարեկան բաժանորդագինն է ամեն տեղ համար 10 Ֆրանք, —վեցամսեայն 5 Ֆրանք. մերձ կոնկրիկ վճարելի։

—Փոստային ծախսը խմբագրութեան կը վերաբերի։

—Լրագրոյս վերաբերեալ ամեն կարգի գրութիւնք պէտք չունի հետևեալ հասցէիս. «Ա. խմբագրութիւն «ՆԵՂՈՍ» լրագրոյ» յԱլէքսանդրիա (Եգիպտոս). (պօստ էֆիսսիէն)։ A la Rédaction du Journal Arménien «NEGHOS», Alexandrie (Egypte). (Poste Egyptienne).

ԽՄԲԱԳԻՐ—ՏԷՐ ԱՆՏՈՆ ՌՇՏՈՒՆԻ

(Խ.) 5—4

ԱՐԴԻՒՆԱԲՕՍԱԿԱՆ-ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԸ

ԱՐԴԻՆ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ։

Ընդունելութիւնները շարունակւում են։ Ծրագրի մասին դիմել հիմնադրին։ Զիջանելով շատերի խնդիրներին, ազատ լսողների համար մուտքը նշանակուած է 1 ը., իսկ կուրսային լսողների համար տարեվճարը մնում է 75 ը.։

Դասախօսութիւնները լինելու են ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամը 6—7 երեկոյեան։

Հիմնադիր կուրսերի Ա. Արաբանեանց
Тифлисъ, Гановская ул., д. Іоаннисіани.

10—10

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՑ

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ

ՆՈՐ ԲԱՑ ԱՐԱԾ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մերձհանրային պոնը, Նահանգական պապպոնի պակ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ստացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԱՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, Մերզոյեանի տանը (նախկին Բելլեի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԵԼՈՒ ԱՌԹԻՒ

Վերջնական էֆէն վաճառք է նշանակած

ՄԵԾ ԶԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

19—3

Дозволено цензурою 30-го Ноября. Тифлисъ 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Чичкова